ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԸ ԱՆՑՅԱԼԻ ՄԻ ՇԱՐՔ ԹՈՒՐՔ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ՀՈՒՇԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Ա. Հ. ՓԱՓԱԶՅԱՆ

Ժամանակակից թուրք պետական գործիչներն ու պատմաբանները, շրջանցելով պատմական փաստերը, փորձում են քողարկել դարասկզբին Արևմտյան Հայաստանում և առհասարակ ամբողջ կայսրությունում տեղի ունեցած հայերի հալածանքներն ու կենոցիդը։ Դիտակցաբար անտեսելով տեղահանության և կոտորածին վերաբերող փաստագրական նյութերը, նրանք աշխատում են խեղաթյուրել իրականությունը։

Հայտնի է, որ բազմաթիվ ուսումնասիրություններ և վավերագրերի ժողովածուներ են հրատարակվել արևմտահայության զանգվածային կոտորածների և հատկապես 1915 թ. երիտթուրքական կառավարության կողմից կազմակերպված և գործադրված Մեծ եղեռնի վերաբերյալ։ Դեպքերին ժամանակակից թուրք գործիչներն ու անմիջական մասնակիցները, իհարկե, ամեն կերպ փորձել են հայկական կոտորածների ընթացքում իրենց կատարած հանցագործությունները քողարկել և իրագործությունները նկարագրել յուրովի, սակայն նրանց հուշագրությունների որոշ էջերում կան առանձին հետաքրքիր և ուշադրության արժանի խոստովանություններ։

1878 թ. Բեռլինի վեհաժողովից հետո, երբ Հայկական հարցը միջազգային բնույթ ընդունեց, սուլթանական կառավարության ազգային ու կրոնական հալածանքները, կյանքի ու գույքի անապահովությունը, հարկային ծանր լուծն ու գավառային պաշտոնյաների չարաշահումները ավելի մեծ չափերի հասան։ «Իթթիհատ վե Թերաքի» («Միություն և առաջադիմություն») կուսակցության հայտնի գործիչ Օսման Նուրին այդ մասին գրում է. «Խիստ հսկողության տակ առնվեցին հայ պաշտոնյաները և հայկական հրատարակությունները։ Այդ պահից սովորական երևույթ դարձավ աքսորը։ Կուսակալների կողմից քննության առնվեցին հայոց եկեղեցիների և դպրոցների մասին տրված հրովարտակները։ Վերջին տարիների ընթացքում փակվեցին այն հայկական դպրոցները, որոնք բացվել էին ոչ թե հրովարտակով, այլ միայն կառավարության թույլտվությամբ։ Խստություններ ու բռնություններ գործադրվեցին նաև հարկերի գանձման հարցում»[1]։

1890 թ. Աբդուլ Համիդի նախաձեռնությամբ կազմակերպվեցին հիմնականում քրդերից կազմված անկանոն զորագնդեր, որոնց գլխավոր նպատակներից մեկն էր հալածել ու կոտորել հայ բնակչությանը։ Ժամանակի մեծ վեզիրներից Սայիդ փաշան ահա թե ինչ բնութագրություն է տալիս այդ զորագնդերին իր հուշագրության մեջ. «Համիդիե հեծելագնդերը, տուրքերից ազատված լինելով հանդերձ, իրենց շահերի համար բռնություններ են գործադրում բնակչության վրա։ Թե՛ վիլայեթի [վարչության] և թե՛ բնակչության բողոքներից պարզվում է, որ Դիարբեքիրի շրջանում գտնվող «Համիդիե» հեծելագնդի հրամանատար Մուստաֆա փաշան, որը նաև աշիրեթի առաջնորդն է, զինված աշիրեթի մարդկանց, բառիս բուն իմաստով, դարձրել է բռնություն գործադրելու կատարյալ մի գործիք, վտանգելով շրջանի բնակչության ապահովությունն ու անդորրը։ Դիարբեքիրի նախկին վալի Խալիդ էֆենդին և նրա հաջորդը՝ Ֆայիք փաշան բազմիցս գրել են այն մասին, որ 4-րդ բանակի

---

[1] Osman Nuri. Abdul Hamid Sani ve devr-i sultanatı. Istanbul, 1327, s. 838 *(արաբատառ)։*

հրամանատար Զեքի փաշան չափից ավելի է հովանավորում հիշյալ Մուստաֆա փաշային։

...Այս տարի [1896 թ.] «Համիդիե» հեծելագնդերի զորախաղերի ծախսերը և նրանց ոռճիկը ապահովելու համար ռազմական մինիստրությունը 35 հազար լիրա տրամադրելու զեկույց էր ներկայացրել։ Ես չեմ հասկանում, թե այս տարի ինչ դրդապատճառների հիման վրա է ցանկություն առաջացել անցկացնել «Համիդիե» հեծելագնդերի զորախաղեր։ Հայերի աղետից հետո Անատոլիայի դրությունը բավականին նրբացել է և եթե քրդերը իրենց այս տեղաշարժերով բնակչության ունեցվածքին և անասուններին նոր բռնություններ գործադրեն, որը ավելի հավանական է, դա առաջ կբերի մի նոր աղետ»[2]։

Ժամանակակից թուրք պատմաբանները ժխտում են Սասունի հայության 1894 թ. կոտորածների փաստը։ Բայց ահա թե ինչ էր գրում հիշյալ Օսման Նուրին. «Անատոլիայից (իմա՝ Արևմտյան Հայաստան—Ա. Փ.) հասած տեղեկությունները չափազանց աղետալի էին։ Ջարդը շարունակվում էր սոսկալի չափերով։ Քաղաքային և զինվորական իշխանությունների տված հրամաններով քրդերը հարձակվել էին գյուղերի վրա, բայց ետ էին մղվել, որից հետո զինվորական ուժեր ուղարկելու անհրաժեշտություն էր առաջացել։ Այդ ժամանակ զինվորները այրել էին գյուղերը և կոտորել բազմաթիվ մարդկանց»[3]։

Այդ դեպքերի մասին որոշ իմաստով հետաքրքիր տեղեկություններ կան նաև հայության հանդեպ վոեժխնդրությամբ լցված Քյամիլ փաշայի հուշագրություններում։ «Լոնդոնում տեղի ունեցած մեծ ժողովներում հայերը արդարացվել են իրենց ապստամբության համար,— գրում է Քյամիլ փաշան,— իսկ Օսմանյան կայսրության պաշտոնյաները ենթարկվել են խիստ պարսավանքի։ Հայերի ապստամբությունը գնահատվել է վատ կառավարման և հատկապես կրոնական խտրականության հետևանքով կառավարության կողմից հայերի հանդեպ ցուցադրված դաժանության արդյունք։ Հասարակության կարծիքը մեր դեմ այն աստիճան էր բռնկվել, որ անգլիական կառավարությունը մրտքերը հանդարտեցնելու համար, առանց սպասելու տեղերում հետաքննություն կատարող հանձնաժողովի զեկույցներին, իր դաշնակիցների՝ Ռուսաստանի և Ֆրանսիայի հետ նպատակադրվել էր Բեռլինի պայմանագրով պահանջել Օսմանյան կայսրության ստանձնած բարեփոխությունների գործադրումը... Այսօր [3 նոյեմբերի 1895 թ.] մոտս եկած Գերմանիայի դեսպանը, ակնարկելով Անատոլիայում տեղի ունեցած խռովությունները, նշեց դրանք վերացնելու անհրաժեշտության մասին։ Նա ասաց նաև, որ ինքը չի կասկածում խռովությունները կանխելու Օսմանյան կայսրության ունեցած կարողության վրա։ Նրանից հետո ինձ այցելության եկած Ավստրիայի դեսպանը այդ խռովությունների կապակցությամբ նշեց, որ քրիստոնյաների վիճակը դանաղան վիլայեթներում երբեք էլ այնպես չէ, ինչպես ցույց է տրվել վալիների և մութասարիֆների կողմից Բարձրագույն դռանը ներկայացված զեկուցագրերում։ Նա հայտնեց, որ նախորդ օրը տեղի ունեցած ժողովում հյուպատոսարաններից դեսպանատները ուղարկված զեկուցագրերի ընթերցումներից պարզվել է, որ քրդերի կողմից կոտորվել են հազարավոր հայեր, առանց խտրականության։ Դիարբեքիրում կատարված քրիստոնյաների սպանությունները, կողոպուտն ու բռնությունները, ինչպես նաև Անատոլիայի այլ վայրերում տեղի ունեցած ճրման խժդժությունները տվյալ դարում չտեսնված իրադարձություններ են։ Նա ավելացրեց նաև, որ միայն Զեյրունում կայսրության զորքերի հարձակման հետևանքով զոհված հայերի թիվը հասել է 4000-ի»[4]։ Տեղի ունեցած այս կոտորածներից հետո իբր թե «խղճահարված» Աբդուլ Համիդը, իր մոտ կանչ-

---

[2] Said paşanın hatıratı. İstanbul, 1328, c. 2, s. 372 (արարատառ)։

[3] Osman Nuri, s. 828, 858 (հոդվածում եղած բոլոր ընդգծումները մերն են— Ա. Փ.)։

[4] Hatırat-ı Sadr-ı Esbak Kamil paşa. Kostantinya, 1329, s. 181, 187 (արարատառ)։

լով Քյամիլ փաշային, բացականչել է՝ «Ես ասել էի խփեք, այլ ոչ թե կոտորեք»[5]։

Հայերին զանգվածաբար բնաջնջելով և նրանց թիվը արհեստականորեն նվազեցնելով, թուրքական կառավարությունը ձգտում էր մոռացության մատնել Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածը, ինչպես նաև մայիսյան բարենորոգումների ծրագիրը։ Միևնույն ժամանակ սուլթանական կառավարությունը մեծ ջանքեր էր թափում թուլացնելու միջազգային հասարակայնության կարծիքը կոտորածների կապակցությամբ։ Այս առթիվ Քյամիլ փաշան Աբդուլ Համիդին խորհուրդ է տվել օտար պաշտոնյաների ստորագրությամբ շտապ հոդվածներ հրապարակել արտասահմանյան մամուլում՝ հերքելու համար տեղի ունեցած ողբերգական իրադարձությունները[6]։ Սակայն Քյամիլ փաշայի այս նենգությունը սպասվող արդյունքը չտվեց։ Իր զեկուցագրում ռուսական պետական խորհրդական Ժադովսկին այս կապակցությամբ հայտնում է. «Վրդովեցուցիչ ռազմական միջոցառումների մանրամասնություններն արդեն թափանցել են եվրոպական մամուլ և ամենուրեք մերկացնող հոդվածների փոթորիկ է բարձրացել Հայաստանի քրիստոնյա բնակչության նկատմամբ թուրքական զորքերի կատարած գազանային գործողությունների դեմ։ Այդ մեղադրանքների ստահոդ և անամոթ հերքումները, որ մոտ օրերս սուլթանի հրամանով հեռագրով ուղարկվել են արտասահմանի թուրքական ներկայացուցչություններին, հնարավորին չափ լայն հրապարակման համար, չկարողացան ցանկալի տպավորություն թողնել Եվրոպայի հասարակական կարծիքի վրա և չկանգնեցրին մեղադրանքների և մերկացումների տարափը, և վերջին օրերս Ֆ. Դուռը ստիպված եղավ ազգելել օտարերկրյա գրեթե բոլոր լրագրերի մուտքը Թուրքիա»[7]։

Սասունում և հառակից հայաբնակ նահանգներում, ինչպես նաև Կ. Պոլսում տեղի ունեցած կոտորածները մեծ հուզում առաջացրին ամբողջ քաղաքակիրթ աշխարհում։ Բողոքների ճնշման ներքո, ի վերջո, սուլթանական կառավարությունը համաձայնեց հանձնաժողով ուղարկել Սասուն՝ հանգամանքները ուսումնասիրելու համար։ Սակայն այդ հանձնաժողովի հետաքննություններն առանձնապես արդյունք չտվեցին, քանի որ Աբդուլ Համիդը վաղօրոք հանձնարարել էր առանց քննության արդարացնել տեղական իշխանություններին և մեղադրանքը բարդել հայ գյուղացիության վրա։ Մյուս կողմից մեծ տերությունները, սեփական շահերից ելնելով, իրենց ներկայացուցիչներին հրահանգել էին չսրել հարաբերությունները թուրքական հանձնախմբի հետ։

1895 թ. հոկտեմբերին Աբդուլ Համիդը ձևականորեն համաձայնվեց ստորագրել բարենորոգումների ծրագիրը, նրա մեջ մտցնելով այնպիսի փոփոխություններ, որոնք տեղ էին թողնում թուրքական բռնությունների համար։ Օսման Նուրին իրավամբ նշում է, որ «բարենորոգումների իրականացման մասին Աբդուլ Համիդի խոստումները կեղծ էին, «բարենորոգում» բառը վրդովեցնում էր նրան և գրգռում նրա ոճրային բնազդները»[8]։

Հիշյալ բարենորոգումների իրականացման հարցում տարակուսանք է հայտնում նաև Քյամիլ փաշան։ «Ընթերցելու ընթացքում ես նկատել էի,— գրում է նա,— որ այդ հոդվածները հաղիվ թե գործադրվեին կյանքում, քանի որ քրդերի վինաթափումը և քրիստոնյա պաշտոնյաների նշանակումը ծանր էր նստելու քրդերի վրա։ Այնուամենայնիվ, քանի որ տվյալ որոշումը հաստատվել էր կայսերական հրամանով, ես ստիպված ստորագրել էի այն, մատնանշելով նաև, որ տվյալ հոդվածների կիրառումը կապված է դժվարությունների հետ»[9]։

---

5 Նույն տեղում, էջ 180։

6 Տե՛ս Belleten. 1955, № 78, s. 227.

7 Геноцид армян в Османской империи. Сборник документов и материалов, под ред. М. Г. Нерсисяна. Ереван, 1982, с. 27—28.

8 Osman Nuri, s. 838.

9 Kâmil paşa, s. 186.

Դեպքերին ականատես թուրք գործիչներ Օսման Նուրին և Սադրկ Շահիդ բեյը իրենց գրվածքներում, անդրադառնալով 1894—1896 թթ. արևմտահայության նկատմամբ կատարված հալածանքներին ու կոտորածներին, բերված բոլոր պատճառաբանություններով հանդերձ չեն կարողանում թաքցնել ճշմարտությունը։ «Այս ջարդը բոլոր պարագաներում,— գրում է Օսման Նուրին,— մի ահարկու եղեռն էր մարդկության դեմ։ Իսկ այս եղեռնի պատճառ հանդիսացողը, անկասկած, նույն Աբդուլ Համիդ երկրորդն էր, որը ղեկավարում էր Յըլդըզի այդ հրոսախումբը և կոտորում էր ոչ միայն հայերին, այլև դեպի կործանում էր տանում ամբողջ հայրենիքը»[10]։ Սադրկ Շահիդը նշում էր. «Հայերի վերջին կոտորածը նախապես մտածված էր, ծրագրված և կարգադրված էր սուլթանի կողմից»[11]։

* * *

Մինչև Համիդյան բռնապետության տապալումը, երիտթուրքերը աշխատում էին ոչ թուրք ժողովուրդներին ներշնչել այն միտքը, որ սահմանադրության վերահաստատումով կվերանա ազգային խտրականությունը, և բոլոր հպատակները հավասար կլինեն օրենքի առջև։ Մինչդեռ 1908 թ. իշխանության գլուխ անցնելուց հետո, երիտթուրքերը ոչ միայն մոռացան իրենց տված խոստումները, այլ դարձան ժողովուրդների ազգային-ազատագրական շարժման բացահայտ թշնամիներ։ Նրանք անբողջապես որդեգրեցին Աբդուլ Համիդի արլյունարբու քաղաքականությունը՝ իրենց դաժանությամբ գերազանցելով նրան։ Ազգային հարցը լուծելու համար ընտրեցին ազգերը ոչնչացնելու ճանապարհը։ Նրանց հանցավոր գործունեության առաջին դրսևորումը եղավ 1909 թ. Ադանայում և Կիլիկյան մի շարք նահանգներում տեղի ունեցած հայության կոտորածը։ Իր հուշագրության մեջ Ադանայի կոտորածի մանրամասնություններին անդրադարձել է Ջեմալը՝ աշխատելով ամեն կերպ նվազեցնել հայ զոհերի թիվը։ Հետագա թուրք հետազոտողները ևս ձգտել են ամեն կերպ թաքցրնել Ադանայում երիտթուրքերի կատարած ոճրագործությունը։ Մինչդեռ փաստերն ու վավերագրերը[12] բերում են այն եզրակացության, որ Ադանայի նահանգում կազմակերպված ջարդերը Աբդուլ Համիդի մեթոդով վաղօրոք նախապատրաստված և հրահրված էին երիտթուրքերի կուսակցության կողմից։

Ադանայի կոտորածի մասին երիտթուրքական գործիչ Մեվլան Ջադե Ռիֆաթը գրում է. «Այդ տագնապալի օրերին «Միություն և առաջադիմություն» կուսակցությունը հայերին չէր մոռացել։ Կուսակցության կենտրոնական կոմիտեից ստացված հրամանի և հրահանգի համաձայն Ադանայի մասնաճյուղը Կիլիկիայում և հատկապես Ադանա քաղաքում ընդհանուր կոտորածի նախապատրաստություն էր տեսել...։ Դեռ Աղաջի գումարտակը առանց մի պատճառի հայերի վրա կրակ բացելու հրաման էր ստացել. Հայերի մի մասը շտապել էր պատսպարվել տներում, մի մասը՝ եկեղեցիներում և օտարազգի ճիզվիտների ու ամերիկյան միսիոներների հաստատություններում։ Այս նոր կոտորածը, որին անմիջապես հետևեցին հրդեհն ու կողոպուտը, շարունակվեց մինչև հաջորդ առավոտ։ Երեխաներով լցված հայկական եկեղեցիներից մեկը կրակի տրվեց...»[13]։

Արևմտահայությունը ամենադաժան հալածանքների և ֆիզիկական ոչնչացման ենթարկվեց հատկապես առաջին համաշխարհային պատերազմի տարիներին երիտթուրքերի կառավարության գործադրած նենգ և բարբարոսական

---

[10] Osman Nuri, s. 866.

[11] Sadık Shahid bey. Islam, Turkey and Armenia, and how they happened. Turkish Mysteries Unveiled, St. Louis, 1898, p. 207.

[12] *Տե՛ս* Геноцид армян в Османской империи, с. 193—220.

[13] Mevlan Zade Rıfat. Turkıye ınkılabının ıç yuzu. Birıncı fasıl, Halep, 1929, s. 95, 98. *(արաբատառ)*։

քաղաքականության հետևանքով։ Իրենց հուշագրություններում թուրք պետական գործիչներ Թալաաթը, Ջեմալը, Ալի Ֆուադ Էրգենը և հետագայում թուրք պատմաբանները գրում են, որ երկրի ներսում առաջացած ապստամբության հետևանքով կառավարությունը նախաձեռնեց հայերի տեղահանությունը, ոմանք էլ փորձում են ապացուցել, որ տեղահանությունը իրականացվել է կովկասյան ճակատում թուրքական բանակի թիկունքը ապահովելու նկատառումով։

«...Երբ Անատոլիայի զանազան տեղերում սկսվեց հայերի տեղահանումը,— գրում է հայերի ցեղասպանության գլխավոր հանցագործներից Թալաաթը,— Ստամբուլի հայերի շրջանում և մասնավորապես կոմիտեներում տիրեց արտասովոր տագնապ։ Հայ կոմիտեների վարչական կենտրոնը, այսինքն արտաքին կազմակերպության կենտրոնը, գտնվում էր Ստամբուլում։ Այս քաղաքը կենտրոնն էր բոլոր տեսակի գինվորական շարժումների։ Հետևվարար ընդհանուր շտաբը, նախ և առաջ Ստամբուլում որևէ ապստամբության հնարավորությունը խափանելու և նեղուցների պաշտպանությունը կազմակերպելու նպատակով, իր ենթակայության տակ գտնվող ոստիկանական վերատեսչությանը հրամայեց ձերբակալել և պաշարման շրջանից հեռացնել բոլոր այն անձանց, որոնք առնչություն ունեն կոմիտեի գործունեության հետ։ Այս հրամանը տրվելուն պես ոստիկանական վերատեսուչը տեղեկացրեց ինձ։ Փնտրվող անձերի մի մասը կովկասցի էր։ Նրանք, մի գիշերվա ընթացքում ձերբակալվելով, ուղարկվեցին Կոնիա։ Ավելի ուշ քննիչ հանձնաժողովի կողմից պարզվեց, որ սրանք Անկարայի գինվորական ատյան տարվելու ժամանակ սպանվել են ոստիկանների կողմից։ ...Ըստ էության, գինվորական նախազգուշական միջոցառում հանդիսացող տեղահանումը անխիղճ, աննկարագիր վարդկանց պատճառով ստացել է ողբերգական կերպարանք։ Ես նպատակ չունեմ բացատրելու այդ գործերի տգեղությունը»[14]։

Արևմտահայության ինքնապաշտպանությունը այս շրջանում ոչ թե ապստամբություն էր, ինչպես պնդում են Թալաաթն ու Ջեմալը[15], արդարանալու միտումով, այլ գոյության կռիվ։ Հայերը զենքի դիմեցին այն պահին, երբ կանգնեցին կոտորվելու վտանգի առաջ։

Բերված հատվածի սկզբում Թալաաթը, խուսանավելով, ձգտել է թաքցնել ճշմարտությունը։ Կասկածից վեր է, որ խոսքը վերաբերում է մեկ գիշերվա ընթացքում Կ. Պոլսի հայ մտավորականների ձերբակալմանն ու աքսորմանը։ Արևմտահայության զանգվածային կոտորածների նախաշեմին տեղի ունեցած այս առաջին մահասարսուռ գործողությունների մասին դեպքերի ժամանակակից Ա. Ալպոյաճյանը գրում է. «Առաջին ապդանշանը ու անդրանիկ սարսափը, որ Կ. Պոլսո բնակչությունը անակնկալի մը առջև կդներ, 1915 ապրիլ 11 (24)-ի ձերբակալությունները եղան։ Մեկ գիշերվան մեջ Կ. Պոլսոյ մտավորական դասակարգին ամենեն կարկառուն դեմքերը և ժողովրդին ամեն դասակարգերեն 250 հոգիի չափ անձեր, ձերբակալվեցան և Ձանկիրը և Այաշ տարագրվեցան»[16]։

Թուրքական մեջլիսի դեպուտատ լինելու հանգամանքով, կառավարությունը որոշակի զգուշություն է հանդես բերել Գրիգոր Զոհրաբի և Վարդգես Սևերինգյուլյանի նկատմամբ։ Նրանք աքսորվեցին ավելի ուշ և սպանվեցին Հալեպից Ուրֆա տարվելու ճանապարհին։ Այս մասին երիտթուրքական ակտիվ գործիչ Ֆայիզ Ուրֆկը Աթայը հայտնում է, որ «Ջեմալ փաշան երկար ժամանակ թղթակցում էր Թալաաթ փաշայի հետ, որպեսզի Ստամբուլից Վանի ռազմական ատյանը ուղարկված երկու երեսփոխանները՝ Զոհրաբն ու Վարդգեսը ազատ արձակվեն։ Ջեմալ փաշան ասում էր՝ «Նրանք իրենցից ոչ մի վտանգ չեն ներկայացնում, թողեք ուղարկեմ Լիբանան։ Թալաաթ փաշան իր

---

[14] Talaat paşanın hatıraları. Istanbul, 1946, s. 72—73.

[15] Behcet Cemal. Cemal paşanın hatıraları. Ankara, 1959, s. 360.

[16] Ա. Ալպոյաճյան. Անհետացող դեմքեր. Գրիգոր Զոհրապ. Կ. Պոլիս, 1919, էջ 210։

պատասխանում նշում էր, որ Զոհրաբն ու Վարդգեսը ապահով վիճակում են գտնվում։ Նրանց չենք կարող վերադարձնել, որովհետև նրանց դատարան ներկայանալը անհրաժեշտություն է. ...Որոշ ժամանակ անց լսեցինք, որ Զոհրաբն ու Վարդգեսը ճանապարհին սպանվել են Չերքեզ Ահմեդ և Նազըմ չեթեների կողմից։ Ջեմալ փաշան հրամայեց, որ երկուսն էլ անմիջապես ձերբակալվեն։ Սակայն Չերքեզ Ահմեդը և Նազըմը, տեղեկանալով այդ մասին, առաջին իսկ գնացքով փախել էին Ստամբուլ, քանի որ Ստամբուլից հովանավորում էին նրանց»[17]։

Փաստերը վկայում են, որ տեղահանվեց այնպիսի շրջանների, գյուղերի և քաղաքների հայությունը, որոնք ճակատամերձ գոտուց շատ հեռու էին։

Նայիմ բեյի՝ վավերագրական նյութերի հիման վրա շարադրված հուշագրության մեջ կարդում ենք. «Եփրատի ափերն արտաքսվածների [հայերի] մեծ մասը Կ. Պոլսի շրջակայքից էր, ինչպես նաև Ռոդոստոյից, Նիկոմիդիայից, Պարտիզակից, Ադաբազարից, Ջիզրեից, Կոնիայից. մի խոսքով, նրանք Կեսարիայի և Անատոլիայի երկաթգծի երկարությամբ ընկած տարածքից աքսորված հայերն էին։ Այս նոր տարագրումը ընդհանուր զարմանքի առիթ տվեց։ Անհասկանալի էր, թե ինչու մարդկանց քշում են Զորի ուղղությամբ։ Սակայն անհանգստանալու համար առավել էական պատճառներ կային։ Ռասուլ-այնում և այլուր տեղի ունեցած կոտորածները տարածվեցին նաև Մեսկենում։ Մի քանի տարի շարունակաբար կատարվող կոտորածները գաղտնի շրմնացին նաև խուլ անապատում։ ...Կառավարության պահանջը ամբողջ հայության ոչնչացումն էր։ Նրանք իրավունք չունեին այլևս գոյատևելու»[18]։

Կասկածից վեր է, որ արևմտահայության բնաջնջման ծրագիրը խարսխված էր նախորդ ժամանակներում սուլթանական Թուրքիայի գործադրած ջարդարարական քաղաքականության վրա։ Որ տեղահանությունն ու կոտորածը կատարվում էին կանխամտածված ծրագրով, հաստատվում է նաև Մեվլան Զադե Ռիֆաթի բերած փաստարկներով. «Միություն և առաջադիմություն» կուսակցությունը որոշում կայացրեց՝ ոչ մի մարդ կենդանի չթողնելու պայմանով սպանել և ոչնչացնել հայերին։ Այս հրամանը իրականացնելու համար էլ նախագահությունը կազմեց մի հանձնաժողով Բեհաեդդին Շաքիր, դոկ. Նազրմ և լուսավորության մինիստր Շյուքրի բեյերից կազմված, նրան տալով «Երեքի գործադիր կոմիտե» անվանումը։ Այս երեքի գործադիր կոմիտեն «Թեշքիլաթ-ը մահսուսե» (հատուկ կազմակերպություն) անվան տակ սկսեց բանտերից հանցագրել քոեական հանցագործներին և ստեղծել չեթեների հրոսակներ։ «Թեշքիլաթ-ը մահսուսե» պիտակի տակ ստեղծված այս չեթեների հրոսակի կատարած հանցագործություններն ու բռնությունները, արատավորելով թուրք ժողովրդին աշխարհի հասարակայնության առջև, արյունալի և բարբարոսական էջեր արձանագրեցին նրա պատմության մեջ»[19],— գրում է Մեվլան Զադեն։

Անժխտելի է, որ Գերմանիան ևս պատասխանատու է կատարված ջարդերի համար։ Այս կապակցությամբ արժե բերել վերջերս Բաղդադի գիտությունների ակադեմիայի քրդական մասնաճյուղի կողմից հրատարակված Քեմալ Մազհար Ահմեդի «Քոդստանը առաջին համաշխարհային պատերազմի տարիներին» աշխատությունից՝ Գերմանիայի մեղսակցությանը վերաբերող հետևյալ հատվածը. «Որոք որ առաջին համաշխարհային պատերազմի տարիներին հայկական կոտորածների գործում գերմանացիներն ունեցել են իրենց սև դերը...։ Բազմաթիվ հայկական շրջաններում, մանավանդ Ուրֆայում, թուրքական զորքերի մեջ կային նաև գերմանացի սպաներ, որոնք սառնասրտորեն դիտում էին օսմանյան թուրքերի ոճրագործությունները։ Թուրք չարագործ ոին-

---

[17] Falih Rıfkı Atay. Zeytindağı. Istanbul, 1957, s. 78—80.

[18] Aram Andonian. The Memoires of Naim bey. AHRA, 1964, p. 33—34.

[19] Mevlan Zade Rifat, s. 108.

վորները հայտարարում էին, որ իրենք սուլթանի և գերմանական կայզերի հրամանն են կատարում»[20]։

Տեղահանված հայերի քարավանները հալվում էին ճանապարհին՝ զոհ դառնալով «Թեշքիլաթ-ը մահսուսե»-ի չեթեների հարձակումներին, քաղցին ու հիվանդություններին։ Տվյալ ժամանակ թուրքական 4-րդ բանակի գեներալներից Ալի Ֆուադ Էրդենը[21] իր հուշերում նշում է, որ տեղահանված հայության թշվառ վիճակը շատ նպաստավոր էր բծավոր և որովայնային տիֆի տարածման համար, որ այդ վարակիչ հիվանդությունների պատճառով մեծ թվով մահացություններ են եղել[22]։ Ֆուադ Էրդենը վկայում է նաև, որ համագործակցություն է եղել Բեհաէդդին Շաքիրի և Ջեմալի միջև, վերջինս մշտապես տեղյակ է եղել իրադարձությունների ընթացքին։

Տեղահանության և կոտորածի ընթացքում գործի է դրվել նաև հայերին մահմեդականացնելու քաղաքականությունը, որին մասնակցել է երիտթուրքական հայտնի կին գործիչ Հալիդե Էդիբը, չնայած նա աշխատել է ցույց տալ, որ ինքը իրոն թե դեմ է եղել հայ երեխաներին մահմեդականացնելու ծրագրին[23]։ Մինչդեռ նրա ժամանակակից Մեվլան Զադե Ռիֆաթի վկայությունից երևում է, որ Հալիդե Էդիբը ևս, «հայ որբերին հավաքելով, մահմեդականացնում էր և դաստիարակում որբանոցներում որպես թուրքերի»[24]։ Հարկ է նշել, որ քրիստոնյա երեխաներին մահմեդականացնելով թուրքացնելը նոր երևույթ չէր, գալիս էր դեռևս միջնադարից, իրագործվում էր մանկաժողովների միջոցով։ Հավաքագրված քրիստոնյա տղաներին հատուկ զորանոցային պայմաններում մոլեռանդ իսլամի ոգով դաստիարակելով՝ դարձնում էին ենիչերի։

Հայերի մահմեդականացման քաղաքականությունը գործադրվել էր նաև 1890-ական թթ.։ 1894—1896 թթ. դեպքերի կապակցությամբ Օսման Նուրին նշում է, որ հայերին բռնի իսլամացնելու առթիվ ռուսական կառավարությունը խոր դայրույթ է հայտնել[25]։ Թուրքերի այդ քաղաքականությունը լայն մասշտաբներ էր ստացել Մեծ Եղեռնի ընթացքում։ Տեղի ունեցած իրադարձությունների մասին Մեվլան Զադե Ռիֆաթի գրքում կարդում ենք հետևյալը. «Ամենուրեք սկսեցին հավաքել հայերին, նույնիսկ առանց հաշվի առնելու հիվանդներին, ծերերին և երեխաներին։ Նրանք, ովքեր ընդունում էին մահմեդականություն, ժամանակավորապես դուրս էին հանվում քարավաններից, իսկ մյուսներին խմբերով, ժանդարմերիայի հսկողության ներքո ուղարկում էին նախատեսված ճանապարհներով»[26]։

Թուրքերը աշխատել են մահմեդականացնել հատկապես Սիրիա տարագրված հայությանը։ Ահա թե ինչ է գրում այդ մասին Ֆալիհ Ռիֆկը Աթայը. «Սիրիայի խորքերը արտաքսված հայերը պիտի նոսրացնեին նաև արաբներով խիտ բնակեցված վայրերը չերքեզների, քրդերի և մյուսների նման։ Նույնիսկ մի հանձնաժողով կազմվեց, որպեսզի հայերին և՛ տուն, և՛ հող տրամադրվի մահմեդական դառնալու պայմանով»[27]։

Նույն հարցի մասին Նայիմ բեյը գրում էր. «Ամենուրեք մոլեգնում էր տիֆի համաճարակը, տեղահանություններով զբաղվող կազմակերները ու այլ պաշ-

---

20 Տե՛ս Հայ-քրդական հարաբերությունների պատմությունից. գիտահանրամատչելի բյուլետեն. 8 (62), Երևան, 1983, էջ 27։

21 Բանակային գեներալ Ալի Ֆուադ Էրդենը եղել է Թուրքիայի ռազմական ակադեմիայի պետ և պաշտոններ է վարել ռազմական վճռաբեկ ատյանում և ազգային պաշտպանության հրամանատարություններում։

22 Ali Fuad Erden. Birinci dünya harbinde Suriya hatıraları. c. I. İstanbul. 1954. s. 122.

23 Memoires of Halide Edip. New-York, London, p. 389.

24 Mevlan Zade Rıfat, s. 145.

25 Osman Nuri, s. 200.

26 Mevlan Zade Rıfat, s. 119.

27 Falih Rıfkı Atay, s. 79.

տոնյաները ամեն օր վեկուցում էին մահացությունների մասին։ Մահը ոչընչացնում էր ոչ միայն հայերին, այլև տեղի բնակչությանը։ Մի անգամ ես Աբդուլահադ Նուրի Բեյին ասացի՝ բեյ էֆենդի, եկեք հայերի աքսորը որոշ չափով թեթևացնենք, քանի որ մահվան սպառնալիքը կախվելու է ամբողջ Միջագետքի վրա։ Այս լայնածավալ երկրամասում բացի սատանաներից ոչ մեկը չի մնալու։ Ռաս ուլ-այնի կայմակամը հաղորդում է տագնապալի տեղեկություններ։ Նուրի բեյը ծիծաղեց. տղաս, ասաց նա, այսպիսով մենք կազատվենք երկու վտանգավոր տարրերից։ Չէ՞ որ հայերի հետ մեռնում են նաև արաբները։ Մի՞թե վատ է դա։ Դրանով մաքրվում է թուրքիզմի ճանապարհը»[28]։

1919 թ. մարտի 8-ին Թուրքիան պատերազմի ներքաշող, հայկական կոտորածներ սանձազերծող հանցագործները դատի տրվեցին։ Կ. Պոլսի ռազմական արտակարգ ատյանը հուլիսի 5-ի դատավճռով պատիժներ սահմանեց երիտթուրքական կառավարության մի շարք անդամների, «Միություն և առաջադիմություն» կուսակցության ղեկավարների համար. հեռակա կարգով մահվան դատապարտվեցին դոկ. Նազիմը, Էնվերը, Ջեմալը և Թալաաթը[29]։ Ջեմալը իր հուշագրություններում փորձում է արդարանալ, թե ինքը մեղավոր չէ արևմտահայերի բնաջնջման գործում։ Նա ընդունում է, որ հայերի տեղահանության ժամանակ տեղի են ունեցել բռնություններ և կոտորածներ[30]։ Թալաաթը, Հալիդե Էդիբի վկայությամբ, խոստովանելով հանդերձ իր անմարդկային արարքը, արդարացում է որոնել ազգային շահերի տեսակետից. «Ես այն համոզմանն եմ, որ այնքան ժամանակ, երբ մի ազգ իր սեփական շահերի համար անում է ամեն ինչ և հաջողում է, աշխարհը ընդունում է այդ։ Ես պատրաստ եմ մեռնելու այն բանի համար, ինչ կատարեցի և ես գրանց. որ կմեռնեմ դրա համար»[31]։

Թալաաթը, իսկապես, իր առաջանի պատիժը գտավ, երբ սպանվեց հայ վրիժառու Ս. Թեհլիրյանի ձեռքով 1921 թ. մարտի 15-ին Բեռլինում։ Սպանվեցին նաև Ջեմալը և երիտթուրքերի ղեկավար մի շարք գործիչներ։

ГЕНОЦИД АРМЯН В МЕМУАРАХ РЯДА ТУРЕЦКИХ ГОСУДАРСТВЕННЫХ ДЕЯТЕЛЕЙ ПРОШЛОГО

А. А. ПАПАЗЯН

Резюме

Современные турецкие историки, замалчивая факт геноцида армян в Османской империи, пытаются фальсифицировать истину и оправдать палачей армянского народа. Однако некоторые турецкие деятели прошлого—современники и непосредственные участники массовой резни, в своих мемуарах иногда вынужденно признают факт геноцида армян.

---

[28] The Memoires of Naim bey, p. 6.

[29] Տե՛ս Թուրքական պաշտոնական Takvim-i vakai թերթի № 3604-ի հավելվածը, էջ 217—220 (արաբատառ)։

[30] Cemal paşa, s. 362.

[31] Halide Edip, p. 387.